



Հանրապետական մանկավարժափոփանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների
դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Մաթեմատիկա

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների
կարևորություն

Վերապատրաստող, մեկնոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Թաթուլ Շահինյան

2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Գլուխ 1-ին: Դասի պլանավորում.....	6
1.1 Դասի պլանավորման նշանակությունը դասի անցկացման գործընթացում.....	6
1.2 Միջին դպրոցում կիրառված դասի պլանավորման	19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	27

Ներածություն

Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի,

թե ինչ պետք է իմանան իր աշակերտները եւ ինչ

հանապարհով

է պետք հասնել այդ գիտելիքներին:

Վ. Ա. ՍՈՒԿՈՄՆԻՆՍԿԻ

Դասը մանկավարժական գործընթացի հիմնքն է: Մանկավարժության հիմնական մասը դրսևորվում է հենց դասի, դասի ընդհանուր գործընթացի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման եւ դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև, նաև միեւնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման եղանակ է՝ սահմանված օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով¹: Դասի արդյունավետության հետ կապված՝ մտահղացումների արդյունավետ իրագործման զլխավոր պայմանը դասի ամենօրյա պլանավորումն է, որի բաղադրիչներն են՝ *դասի թեման, նպատակները* (կրթական, զարգացնող, դաստիարակչական), *տեսակը* (նոր նյութի կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման),

¹ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՅՈՒՆ., ՍԱՀԱԿՅԱՆ Ա., Մանկավարժություն, Երևան, 2004 թ., էջ 196 :

հիմնական փուլերին հատկացվող *ժամանակի բաշխումը, հենքային հասկացությունների ձևավորման փուլերը* (հասկացությունների ներմուծում, օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում, էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում), *դասավանդման մեթոդները՝ բանավոր* (անհատական, համընդհանուր) կամ *գրավոր* (ինֆնուրոյն, ստուգողական աշխատանք, թելադրություն) *հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, պատմվածք, գրույց, գրույցի տարբերակ պատմվածք, տեղեկույթի աղբյուրների հետ ինֆնուրոյն աշխատանք, վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների կատարում սովորական կամ խաղային ձևով, աշխատանքների ընդունում սխեմայի կազմում, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեխստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում:*

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ- Միջին դպրոցում սովորողների ուսուցման գործընթացը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ_ Ուսուցանվող թեմայի վերաբերյալ կազմել համապատասխան դասի պլան, որով հնարավոր կլինի ձևավորել մոտիվացիա սովորողների մոտ և նպաստել ուսումնական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ_Ուսումնասիրել դասի պլանավորման նշանակությունը դասի անցկացման գործընթացում՝ ստեղծելով բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և սովորողի ինֆորմացիայի դրսևորման համար: Ուսումնասիրությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը: Հետազոտությունը անցկացրել ենք 5-րդ և 7-րդ դասարանում, որտեղ սովորում են համապատասխանաբար 26 աշակերտ: Հետազոտությունն անցկացնելու համար կիրառել ենք հարցադրման, վերարտադրողական, ինտերակտիվ մեթոդներ: Ուսումնասիրել ենք գիտամանակավարժական գրականություն և հետազոտվող թեմային վերաբերվող կատարված հետազոտական աշխատանքները և կատարել ենք վերլուծություն:

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

Դասի պլանավորում

1.1 Դասի պլանավորման նշանակությունը դասի անցկացման գործընթացում

Հիմն ընդունելով թեմատիկ պլանը՝ ուսուցիչը կազմում է օրցուցային պլանը, ուր ծրագրային նյութերը բաշխում է ուստարվա կամ կիսամյակի ամիսների, շաբաթների, օրերի վրա, նշում դրանց իրացման ժամկետները: Օրվա դասերի պլանում արտահայտվում են հետևյալ տարրերը՝ դասի անցկացման օրը, ամիսը, թվականը, թեմատիկ պլանում եղած նրա համարը, դասարանը, դասի կազմակերպման և անցկացման տեղը, թեմայի անվանումը, կրթական-դաստիարակչական և զարգացման խնդիրները, դասի կառուցվածքի բաղադրամասերը դասի իրար հաջորդող փուլերը, ըստ փուլերի՝ ժամանակի բաշխումը, ուսումնական նյութի բաղադրությունը, ուսուցչի և աշակերտների աշխատանքի ձևերը, դասի կահավորման միջոցները, սնային հանձնարարությունները² : Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը

² ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մեթոդական, Մասնավարժություն, Երևան, 2004 թ., էջ 203:

համաընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ և պահպանվում են հետևյալ պայմանները՝

1) առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման,

2) աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, և տվյալ հնարքի կիրառման հմտություններ,

3) տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը, և ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը:

Աշակերտների մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ, համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որը աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում, դրանից հետո առաջարկում է աշակերտներին կարդալ գիրքը, լսել ուսուցչի կամ հարցման համար գրատախտակի մոտ կանչված աշակերտին: Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի գործու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինֆնավստահությունը եւ կնվազի ուշադրությունը:

Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ եւ հմտություններ ունենան, հակառակ դեպքում՝ ոչ բոլոր աշակերտները

կմասնակցեն դասարնուն կատարվող աշխատանքներին: Բոլոր աշակերտները պետք է համոզված լինեն, որ կկարողանան կատարել առաջադրանքը:

Եթե դասավանդման մեթոդները համարենք ուսուցչի եւ աշակերտների փոխկապակցված գործունեության համակարգված միջոցներ, որոնք ուղղված են դասի նպատակին հասնելուն, ապա յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը պետք է ներառի՝

- 1) ուսուցչի ուսուցողական գործունեության նկարագրությունը,
- 2) աշակերտի ուսումնական հանաչողական գործունեության նկարագրությունը,

3) վերը նշվածների միջև կապը կամ միջոցները, որոնցով ուսուցչի ուսուցողական գործունեությունը ուղղորդում է աշակերտի հանաչողական գործունեությանը: Այսպիսի մոտեցումը պետք է իր անդրադարձն ունենա աշակերտի անձը կարևորող դասի պլանավորման վրա:

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝ դասի սկզբի կազմակերպումը, գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտումը, աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ, ծանոթացում նոր նյութի հետ, գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում (կրկնություն, կատարելագործում եւ գիտելիքների ու կարողությունների կիրառում), գիտելիքների համակարգում եւ ընդհանրացում, տնային աշխատանքի կազմակերպում:

Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման

պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝ լինեն հստակ, իրական եւ բաց, այսինքն՝ աշակերտը պետք է հասկանա, թե ինչ են իրենից ուզում եւ ինչպես այն կատարել: Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3 մասեր՝ Դասի կառուցվածքային տարրերը, Ուսուցչի գործունեությունը, Աշակերտի գործունեությունը:

Յուրափանջյուր դասի պլան պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձեւը եւ մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձեւերը, ստուգման ձեւերը եւ միջոցները, ուսուցչի եւ աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Ուսուցչի մասնագիտական որակներից մեկն էլ դասը ճիշտ պլանավորելն է, որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է:

Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ սովորեցնել

- Ինչո՞ւ սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել:

Ելնելով զարգացնող կրթության սկզբունքներից՝ ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի օգնի աշակերտին ինֆորմացիայնաբար գիտելիքներ ձեռք բերել,

- սովորել սովորեցնել,
- ուսուցման ընթացքում գլխավոր ծանրաբեռնվածությունն ընկնի ոչ թե աշակերտի հիշողության, այլ մտածողության վրա,
- ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն,

Աշակերտները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով (ուսուցչի հաղորդումից, դասագրքից) այլ ինֆորմացիայնաբար, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում, ինչը աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում, դրական վերաբերմունք ձևավորում ուսման նկատմամբ, նպաստում դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա, և՛ հեռավար խնդիրների լուծումը:

Ներկայացնենք ակտիվ ուսումնասիրության և մտածողության զարգացմանը նպաստող դասի պլանավորում մի ուշագրավ կառույց՝ ըստ «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով³»:

Ծրագիրը ուսուցման գործընթացում կիրառում է դասի՝ 3 փուլից (խթանում, իմաստի ընկալում, կռադատում) կազմված մի մոդել, որն անվանում են նաև **ԽԻԿ** համակարգ:

ԽԻԿ համակարգի առաջին փուլը **խթանումն է**: Այս փուլի նպատակն է աշակերտների հետաքրքրությունը խթանել, նպաստել, որ նրանք խորհեն նոր հաղորդվելիք թեմայի մասին, վեր հանել թեմային առնչվող նրանց նախնական գիտելիքները, հարցեր տալ և սահմանել սովորելու կոնկրետ նպատակները:

Դրան հաջորդում է **իմաստի ընկալման** փուլը, որի ընթացքում աշակերտները տեխստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցով ծանոթանում են նոր նյութին, և այդ ընթացքում նրանցից ակնկալվում է, որ կարողանան նոր տեղեկությունները, գաղափարները կամ բովանդակությունը ներհյուսել իրենց սեփական՝ արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ:

Ավարտվում է **կռադատման փուլով**, որի ընթացքում աշակերտներն իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին՝ վերակառուցելով իրենց գիտելիքները:

Ներկայացնենք մտածողությունը խթանող դասի պլանավորման կառուցվածքի մի օրինակ:

³ <https://multiurok.ru/files/dasi-planavorowm-7.html>:

ՄԻՆԶԵՎ ԴԱՍԸ

Մինչև դասը ուսուցիչը պետք է փորձի պատասխանել իր դասի նպատակի, խնդիրների, նախադրյալների, գնահատման և ժամաֆանակի մասին մի շարք հարցերի:

Հիմնավորում

- Ի՞նչու է այս դասն արժեքավոր:
- Ինչպե՞ս է այն առնչվում աշակերտների արդեն սովորածին, իմացածին և այն թեմային կամ գաղափարներին, որոնք հետագայում պետք է սովորեն:
- Քննադատական մտածողության զարգացման ի՞նչ հնարավորություններ է ընձեռում այս դասը:

Խնդիրներ

- Հատկապես ի՞նչ գիտելիքներ և պատկերացումներ պետք է հետագոտվեն կամ հաղորդվեն:
- Աշակերտներն ինչպե՞ս կարող են կիրառեն այդ գիտելիքները և պատկերացումները:

Նախադրյալներ

- Այս դասն արդյունավետ կերպով յուրացնելու համար աշակերտները նախապես ի՞նչ պետք է իմանան կամ արդեն կարողանան անել:

Գնահատում

- Առակերտի իմացության ի՞նչ ապացույցներ է պետք փնտրել:

Ռեսուրսներ և ժամաբաշխում

- Ինչպե՞ս պետք է բաշխվեն ռեսուրսները և ժամանակը առաջադրանքների, վարժությունների և գործողությունների միջև:

Խմբավորում

- Այս դասի համար ի՞նչ սկզբունքով կարելի է առակերտներին բաժանել խմբերի:

ԲՈՒՆ ԴԱՍԸ

Ահա մի շարք հարցեր, որոնք կարող են օգնել դասի բուն ընթացքը պլանավորելիս:

Խթանում

- Ինչպե՞ս կարելի է օգնել, ուղղորդել առակերտներին, որ նրանք կարողանան ձևակերպել սովորելու իրենց նպատակներն ու հարցերը և վեր հանել, բացահայտել իրենց նախնական գիտելիքները:

Իմաստի ընկալում

- Առակերտներն ինչպե՞ս են հետազոտելու նյութը:

Ի՞նչպե՞ս են վերհսկելու նյութի սեփական ընկալումը:

Կռահատում

- Առակերտներն ինչպե՞ս կարող են օգտագործել, կիրառել դասից սովորած նոր գաղափարները: Ինչպե՞ս պետք է նրանց ուղղորդել, որ խորհեն այս նոր գիտելիքների, տեղեկությունների, գաղափարների մասին, գտնեն հարցերի պատասխանները, փնտրեն անորոշ կետերի պարզաբանումները:

Ամփոփում

- Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի ավարտին: Խնդիրները որքանո՞վ պետք է արդեն լուծված լինեն:

ԴԱՍԻՑ ՀԵՏՈ

Իսկ դասից հետո սեփական աշխատանքը վերլուծելու համար կարևոր է պատասխանել էլի մի քանի հարցի:

Հավելյալ աշխատանք

- Ի՞նչ հետագա իմացության կարող է մղել այս դասը:

Այս դասն ավարտելուց հետո ի՞նչ պետք է անեն առակերտները:

Ինչպես տեսանք, բերված օրինակում դասի պլանավորման գործընթացը բաժանված է երեք մասի՝ մինչև դասը, բուն դասը և դասից հետո: Մանրմասնեմք այդ մասերից յուրաքանչյուրը:

ՄԻՆԶԵՎ ԴԱՍԸ

Ուսուցիչն ընտրում է դասի նյութը, հստակեցնում իր մտեցումները, գնահատում նյութի կարևորությունը, պարզում խնդիրներն ու խորհում նպատակները, թե այն ինչպես կարող է նպաստել մտածողության ու ակտիվ ուսումնառության զարգացմանը:

Անշուշտ, դասերը տարբեր չափով կարող են օգտակար լինել: Մի դասի թեման և նյութը կարող են աշակերտներին հաղորդակից դարձնել հիմնարար հասկացություններին, որոնց վրա կառուցվելու է առարկայի հետագա իմացությունը, մյուսը կարող է ձևավորել շրջապատող աշխարհը հասկանալու և գնահատելու, մեկ ուրիշը՝ գեղեցիկը տեսնելու կարողություն և այլն:

Բացի բովանդակային արժեքներից, դասը կարող է արժեքավոր լինել նաև նրանով, որ սովորեցնում է սովորել և մտածել: Ուստի դասի պլանավորման մասին մտածելուն զուգահեռ ուսուցիչը պետք է ինքն իրեն հարց տա, թե դասի ժամանակ ուսումնառական որ հմտություններն է խթանելու, և թե մտածողության զարգացման ինչպիսի հնարավորություններ է ընձեռում տվյալ դասը.

- Աշակերտներն այս դասից ի՞նչ տեղեկություններ կարող են ստանալ:
- Ինչպե՞ս ընտրել դասի նյութը, որպեսզի այն աշակերտներին հետաքրքրի, արձագանք առաջացնի:

- Որո՞նք են այս նյութին առնչվող այն կարևոր խնդիրները, որոնք կարող են ունենալ մի քանի մեկնաբանություն, համաձայնության կամ անհամաձայնության տեղիք տալ:
- Ինչպե՞ս կարելի է դասն օգտագործել հարցման, վերլուծության, հաշվետվության կամ բանավիճելու հմտությունները զարգացնելու համար:
- Թեմայի ո՞ր մասը կարող է աշակերտին մղել ինքնուրույն, հետազոտական կամ որևէ այլ գործողության:

Այսպիսի հարցերի մասին նախապես մտածելու և դասը ճիշտ պլանավորելու դեպքում այն իսկապես օգտակար կլինի, քանի որ աշակերտին կմղի հարցեր ու պատասխաններ տալ, բանավիճել և փորձել գտնել նյութից բխող հարցերի պատասխանները: Այն նաև կնպաստի մտածողության և հաղորդակցման հմտությունների զարգացմանը, դասին կհաղորդի կենդանի հնչեղություն:

Բոլոր դասերի թեմաները չէ, որ կարող են այսպիսի հնարավորություններ ընձեռել, ուստի ուսուցիչը, նախօրոք ծանոթանալով դասի նյութին, անհրաժեշտության դեպքում այն կարող է լրացնել որևէ հոդվածով կամ բանավոր տրված տեղեկատվությամբ, որևէ գեղանկարով կամ լուսանկարով, որը դասը հետաքրքիր անցկացնելու համար բազմազան հնարավորություններ կընձեռի:

Ուսուցիչն իր համար պետք է հստակեցնի դասի խնդիրները: Յուրաքանչյուր դաս կարող է ունենալ մի քանի խնդիր: Դրանք պետք է լինեն կոնկրետ:

Դրանց մի մասը պետք է խթանի բարձր կարգի մտածողություն, որը ենթադրում է, որ աշակերտներն անելու են ավելին, քան ուսուցչի տված տեղեկությունները հասկանալը կամ մտապահելն է: Իհարկե, ուսուցչի հաղորդած կամ դասագրքում տրված տեղեկությունները հասկանալն ու հիշելն արժեքավոր ու կարևոր է, բայց զարգացնող ուսուցումն ապահովելու համար սա բավարար չէ: Ուսուցիչն աշակերտներից պետք է ակնկալի ավելի բարձր արդյունքներ: Նրանք պետք է ոչ միայն ընկալեն նյութը, այլ նաև կատարեն շատ ավելի ակտիվ մտավոր աշխատանք, քան պարզապես տրված նյութի յուրացումն է:

Ուսուցիչը դասի համար պետք է նախատեսի այնպիսի խնդիրներ, որոնք աշակերտներին կտանեն մտածողության տարբեր տեսակների միջով՝ բովանդակություն և տեղեկությունների յուրացում, դրանց մեջ եղած նկատառումների բացահայտում և կյանքում դրանց կիրառում:

Այսինքն՝ դասի մեջ ներառել մտածողության հաջորդական զարգացում, ինչպես՝

- Գտնել դասի, թեմայի, տեքստի հիմնական իմաստը:
- Դասի նյութում ներկայացված մտքերին առնչվող օրինակներ բերել կյանքից:
- Համեմատել կամ հակադրել դասի նյութում եղած երկու կամ ավելի մտքեր կամ հասկացություններ:
- Ունենալ դիրքորոշում և կարողանալ հակառակ փաստարկներից պաշտպանել այն:
- Որոշել, թե ինչ պետք է իմանա տվյալ թեմայից:

- Որոշել, թե որն է գործողությունների ամենաարդյունավետ ընթացքը դասից բխող խնդիրները լուծելու համար:

Ուսուցիչը դասը պլանավորելիս պետք է հաշվի առնի նաև նախադրյալները. աշակերտն ի՞նչ նախնական գիտելիք ունի այդ թեմայից և ի՞նչ հմտություն պետք է ունենա դասը հաջող յուրացնելու համար:

Ըստ Պիաժեի և նրա համախոհների՝ սովորելը նոր ինֆորմացիայի ներառումը, ձուլումն է (ասիմիլյացիան) մեր ունեցած գիտելիքների մեջ, որի ընթացքում տեղի է ունենում այն ինֆորմացիայի ծավալի ընդարձակում, որ մենք ունակ ենք յուրացնել: Ուստի դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչը, նախքան նոր նյութին անցնելը, պետք է վեր հանի աշակերտի նախնական գիտելիքներն այդ թեմայի վերաբերյալ, իսկ եթե այդ գիտելիքները բավարար չեն, որոշակի բացատրություններ տա, ապա նոր անցնի դասի նյութին:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է հստակեցնի *գնահատման* խնդիրը: Գնահատման համար ուսուցիչը պետք է ստանա ապացույցներ, որ աշակերտները

- յուրացրել են դասի նյութի բովանդակությունը,
- ձեռք են բերել մտածողության և սովորելու համապատասխան փորձառություն:

Գնահատումը կարող է իրականացվել դասին զուգահեռ, ինչպես նաև նրա տարբեր փուլերում, ոչ միայն վերջում, ինչպես արվում է ավանդաբար:

Գնահատման համար աշակերտներին տրվում են երկու տիպի հարցեր Առաջինը՝ նյութի յուրացումը, երկրորդը՝ մտածողությունը ստուգելու նպատակով: Գոյություն ունեն գնահատման բազմաթիվ ուղղակի և անուղղակի մեթոդներ՝ ինֆրագնահատում, խմբային ինֆրագնահատում, թեսթեր, գնահատման սանդղակներ (ուղղակիներ), թղթապանակ, հավաքածուներ և այլն, որոնցից ուսուցիչը պետք է ընտրի տվյալ նյութի համար ամենից նպատակահարմարը:

Ուսուցիչը, մինչև դասին անցնելը, պետք է նախապես պլանավորի ժամանակը, մտածի անհրաժեշտ ռեսուրսների մասին, որոշի, թե նախատեսված աշխատանքի համար ինչպես պետք է խմբավորի աշակերտներին (ի՞նչ ձևով և ի՞նչ ֆանակով):

1.2 Միջին դպրոցում կիրառված դասի պլանավորման եղանակներ

Մեր հետազոտության ընթացքում մենք որոշեցինք դասի պլանավորման մեկական օրինակներ բերել միջին դպրոցի 6-րդ դասարանի «Մաթեմատիկա» և 7-րդ դասարանի «Երկրաչափություն» առարակների ներփոփոխյալ թեմաներով:

Օրինակ 1-ին: 6-րդ դասարան, դասարանում կա 26 աշակերտ:

Առարկա՝ Մաթեմատիկա

Թեմա՝ «Ամբողջ բացասական թվեր»⁴

Նպատակը՝ սովորողը պետք է գաղափար ունենա բացասական թվերի մասին: Սովորողը պետք է գաղափար ունենա ամբողջ թվերի մասին: Իմանա գտնել ամբողջ թվի բացարձակ արժեքը:

Վերջնարդյունք՝ սովորողը կարողանա

1. Գործողություններ կատարել դրական և բացասական թվերի հետ
2. Սովորողը կարողանա սահմանել ամբողջ թվերը և նրանց բացարձակ արժեքը
3. Կարողանա կոորդինատային առանցքի վրա պատկերել ամբողջ թվերը:

Հիմնական հասկացություններ՝ ամբողջ թվեր, դրական և բացասական թվեր:

Անհրաժեշտ նյութեր, պարագաներ՝ ջերմաչափ և ֆարսեզ

⁴ Բ. Նահապետյան, Ա. Աբրահամյան, Մաթեմատիկա, 6-րդ դասարան, էջ 78-79:

Գնահատում՝ բանավոր հարցում և վարժությունների լուծում:

1. Դասի սկիզբ (5-10 րոպե):

Կազմակերպչական աշխատանքներ, տնայինի ստուգում և նախորդ նյութի հարցում:

Սահմանաէլ դասի նպատակը և անցնել նոր նյութին:

2. Նոր նյութի մատուցում (10-15 րոպե)

Դասը պատմում են, ներկայացնում օրինակներ՝ կատարելով հարցադրումներ և ջերմաչափի ու ֆարտեզի օրինակներով կապում առօրյա կյանքի հետ:

3. Գործնական աշխատանք (5-10 րոպե):

Ըստ շարքերի՝ դասարանը բաժանում են երեք խմբի, տալիս են լուծել երեք խնդիրներ (№ 386, № 391, № 394)⁵:

4. Ինֆնուրոյն աշխատանք (5-10 րոպե):

Յուրաքանչյուր աշակերտ աշխատում է ինֆնուրոյն իր առաջադրանքի վրա:

Խառը ամբողջ թվերը գրում են և պահանջում դրանք դասավորել ահման և նվազման կարգով:

5. Դասի ավարտման փուլ:

Դասի ամփոփում (2-5 րոպե):

⁵ Բ. Նահապետյան, Ա. Աբրահամյան, Մաթեմատիկա, 6-րդ դասարան, էջ 80-81:

Հարցադրումների միջոցով պարզել, թե առակերտներն ինչ սովորեցին:

Տնային առաջադրանքների հանձնարարում:

Օրինակ 2-րդ

7-րդ դասարան. Դասարանում կա 25 առակերտ:

Առարկա՝ Երկրաչափություն

Դասի թեման՝ « Եռանկյան և եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը »⁶:

Նպատակը՝ սովորողը պետք է գիտենա՝ ինչ է եռանկյունը, նրա ներքին և արտաքին տիրույթները, գագաթները, կողմերը, անկյունները, պարագիծը, համապատասխան կողմեր և համապատասխան անկյունները, եռանկյան տարրերը, հավասարբեռանկյուններ, վերադրում:

Սովորողը պետք է իմանա՝ ինչ է եռանկյունը, նրա ներքին և արտաքին տիրույթները, թեորեն, թեորենի ապացույց, եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը:

Վերջնարդյունք՝

1. Սովորողը կարողանա բացատրել, թե որ պատկերն է կոչվում եռանկյուն
2. Կարողանա գծագրել եռանկյուն և ցույց տալ նրա կողմերը, գագաթները և անկյունները
3. Կարողանա հաշվել եռանկյան պարագիծը

⁶ Լ. Աթանասյան, Վ. Բուտուզով..., Երկրաչափություն, 7-րդ դասարան, էջ 33-36:

4. Կարողանա եռանկյան հետ կապված հասկացություններ սահմանել

5. Կարողանա ձևակերպել եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը
և ապացուցել

6. Կարողանա խնդիրներ լուծել՝ ըստ անհրաժեշտության կիրառելով
եռանկյունների հավասարության առաջին հայտանիշը:

- Հիմնական հասկացություններ՝ եռանկյան և եռանկյունների հավասարության առաջին հայտանիշ:

Անհրաժեշտ պարագաներ՝ փայտից կամ թղթից պատրաստված եռանկյուններ:

Գնահատում՝ բանավոր հարցում և վարժությունների լուծում:

Դասի ընթացք.

1. Դասի սկիզբ (5-10 րոպե)

Կազմակերպչական աշխատանքներ, տնային առաջադրանքների ստուգում և նախորդ
նյութի հարցում:

Սահմանել դասի նպատակը և անցնել նոր նյութին

2. Նոր նյութի մատուցում (10-15 րոպե):

Դասը պատմում են, ներկայացնում են օրինակներ, կատարելով հարցադրումներ, կապում են
առօրյա կյանքի հետ:

3. Գործնական աշխատանք (5-7 րոպե)

Հստ շարքերի դասարանը բաժանում են 3 խմբերի, տալիս են լուծել երեք խնդիրներ (№ 100-Ա) ,Բ), Գ)⁷⁾:

4. Ինֆնուրոյն աշխատանք (5-7 րոպե):

Պահանջում են աշակերտներից գծել եռանկյուն և հաշվել նրա պարագիծը, ինչպես նաև անկյունաչափի միջոցով որոշել եռանկյան անկյունները:

5. Դասի ավարտ (5-7 րոպե):

Դասի ամփոփում՝ հարցադրումների միջոցով պարզել աշակերտները ինչ սովորեցին և տալիս են տնային առաջադրանք:

⁷⁷ Լ. Աթանասյան, Վ. Բուտուզով..., Երկրաչափություն, 7-րդ դասարան, էջ 36:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դասը մանկավարժական գործընթացի հիմնասյունն է: Դասի արդյունավետության հետ կապված՝ մտահղացումների արդյունավետ իրագործման գլխավոր պայմանը դասի ամենօրյա պլանավորումն է:
- Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝ լինեն հստակ, իրական եւ բաց, այսինքն՝ աշակերտը պետք է հասկանա, թե ինչ են իրենից ուզում եւ ինչպես այն կատարել:
- Ուսուցիչը, մինչև դասին անցնելը, պետք է նախապես պլանավորի ժամանակը, մտածի անհրաժեշտ ուսուրսների մասին, որոշի, թե նախատեսված աշխատանքի համար ինչպես պետք է խմբավորի աշակերտներին (ի՞նչ ձևով և ի՞նչ ֆանակով):
- Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3 մասեր՝ *Դասի կառուցվածքային տարրերը, Ուսուցչի գործունեությունը, Աշակերտի գործունեությունը*:
- Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի^օնչ սովորեցնել
- Ինչո՞ւ սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել:
- դասի պլանավորում մի ուշագրավ կառույց է դասի՝ 3 փուլից (խթանում, իմաստի ընկալում, կռահատում) կազմված մի մոդել, որն անվանում են նաև ԽԻԿ համակարգ:
- Հետազոտական աշխատանքի համար մենք ընտրել էին միջին դպրոցում սովորողների համար մաթեմատիկա և երկրաչափություն առարկաների մեկական թեմա՝ կազմելով համապատասխան դասի պլաններ:
- Դասի պլանավորումը կատարվել է՝ համձայն «Ուղորդումներ պլանավորելու համար և ՈՒՀԶ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ»-ի⁸:
- Դասի ճիշտ պլանավորումը հնարավորություն է տալիս մեզ՝ ուսուցիչներիս առավել կարգաբերված և կանոնակարգված դասի կազմակերպում:
- Դասի նախապես պլանավորումը հնրավորությունը է ընձեռում ճիշտ տնօրինել դասի ժամանակը, տարբերակել տրվելիք ինֆորմացիայի, գիտելիքի առաջնայնությունը և երկրորդայնությունը:
- Ճիշտ կազմակերպելու դասի անցկացման ֆայլերի հաջորդականությունը:

Ծնթ.՝ Պլանավորման ուղորդումները և ՈւՀԶ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ տրված են վերապատրաստող մենթորի կողմից:

- Աճակերտներին մշտապես ներգրավված պահելու դասի ողջ գործընթացին:
- Ի վերջո, կարելի է ասել, որ ուսուցչի համար դասի օրվա պլան ունենալը նույնն է, ինչ բեմ բարձրացած դերասանի համար նախապես մշակված և սովորած սցենարը, առանց որոնց թե՛ ուսուցիչը, թե՛ դերասանը դատապարտված են ձախողման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՅՈՒ., ՍԱՀԱԿՅԱՆ Ա., Մանկավարժություն, Երևան, 2004 թ.:
2. ¹ Բ. Նահապետյան, Ա. Աբրահամյան, Մաթեմատիկա, 6-րդ դասարան, Երևան, 2012 թ.:
3. Լ. Աթանասյան, Վ. Բուտուզով...., Երկրաչափություն, 7-րդ դասարան, Երևան, 2011 թ. :

ԷԼԵԿՏՐՈՆԱԹԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. <https://multiurok.ru/files/dasi-planavorowm-7.html>: